«Русскій Курьеръ» լրագրին հեռագրում են Եկատերինոսլավից որ մայիսի 10-ին այդ քաղաքի մէջ կայսեր-որդեցան երկու մարդիկ, որոնք Ս. Պետերբուրգից էին եկել և սարսռում էին ժողովրդի մէջ յեղափոխական բովանդակութեան պրոկլամացիաներ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Փարիզից գրում են հետեւեալը։ Օրվայ գլխաւոր խնդիրը մեռած ֆիրարդինի տեղ Փարիզի ինքնիշխող շրջանի պատգամաւորի ընտրութիւնն է։ Ֆրանսիական օրէնքները կառավարիչները 3 տարի ժամանակամիջոց են տալիս ժողովից որ և է պատճառով պակասած մի պատգամաւորի տեղ ուրիշին ընտրելու համար։ Այդ ժամանակամիջոցը ամենամեծն է և մինչև այժմ կառավարութիւնները դրա համեմատ են վարված։ Այս անգամ անկարելի է այդ ժամանակամիջոցը նշանակել, որովհետև երեք ամեից յետոյ կը լինայ պատգամաւորների այժմեան ժողովի գործունէութեան շրջանը և նա կարձակվի, որպէս զի նոր ընտրութիւններ լինին։ Կառավարութիւնը Փարիզի ինքնիշխող շրջանի պատգամաւորի ընտրութիւնը նշանակեց մայիսի 29-ին և դրա այդ վարմունքը ամենքը հաւանում են։ Իսկապէս կառավարութեան համար անհրաժեշտ չէ մի աւելորդ պատգամաւոր ունենալ, բայց որովհետև Փարիզի ինքնիշխող շրջանը պատգամաւոր նշանակելու թիւն է ստացել, կայսերութեան վիրջին օրերում թիւրին ընտրելով, Մակ-Մահոնի նախագահութեան ժամանակ Դրեվֆին, իսկ Դրանից յետոյ ֆիրարդինին, այդ պատճառով ընդհանուր ընտրութիւններից առաջ ամենքի համար հետաքրքիր է իմանալ, թէ ինչպիսի ընտրութիւն կը ստանան այն ցոյցերը, որոնց հողի վրա քննվում էին երկու նախագահների մրցութիւնը։

Այդ շրջանի համար մինչև այժմ յայտնի են երեք կանդիդատ։ 1) Հերվիէ, պահպանողական հանրապետական, կամ ազատամիտ միապետական, մի խօսքով օրլիանիստների „Soleil“ լրագրի խմբագիրը։ Ցուցվարին նա քաղաքային խորհրդարանի անդամ ընտրվեցաւ „Chausse d'Antin“ քաղաքամասի մէջ։ 2) Պոլ Դիւբուա հանրամասական, որ շատ համեստ քաղաքացի է, քաղաքային խորհրդատու և բժշկութեան գիտուն։ Նա բաւական անբեղուն անձնաւորութիւն է և ըստ վարքի սովորութեան ուսանողական ժամանակից պատկանում է այն խումբին, որ շրջապատում է Գամբետտային։ 3) Անտոլ Դեկաֆոր հին հանրապետական, որ եթէ արմատական չէ, գոնեա 1848 թուականից առաջուցմ մարդկերանցից մէն է համարվում։ Գուցէ քաղաքական տեսակէտից նրա անունը բաւական որոշված չէ, բայց նա անձնականապես այնպիսի ծառայութիւններ է մատուցել, որոնք մեծ ազդեցութիւն են գործում հասարակութեան վրա։ 1870 թուականին Aisne նահանգի պրեֆեկտ լինելով, որ կիսով չափ գրավված էր թշնամի զորքերից, նա մի խումբ բանտարկեալներ ազատեցաւ պահակներից։ „Saint Quentin“ քաղաքը 1877 թուականին դեկաբրի մինիստրութեան ժամանակ նա, մասնաւոր դիրքերով նշանակվելով, կառավարութիւնը մի նախագիծ ներկայացրեց, մասնաւոր կառարելագործութեան մասին և, երբ նրա նախագիծը չընդունվեցաւ, անյապաղ հրաժարվեցաւ իր պաշտօնից։ Վերջապէս Դոդերուան նրան առաջարկվեցաւ „Saint Quentin“ շրջանի պարլամենտական կանդիդատ լինել, բայց նա հրաժարվեցաւ, ասելով, որ իր ամրողջ կեանքի ընթացքում պաշտպանելով տեղական կանդիդատներին, նա չէ կամենում իր հանդման հանկամով վարվել, մանաւանդ որ իրը ամենանպատկ գործին մասնակից է գտնում Անձնական քաջութիւնը, եռանդը և ընչին փառասիրութեան բացակայութիւնը այնպիսի յատկութիւններ են, որոնք միշտ նկատվում են հասարակութեանից։

Եթէ մտքերը միայն այս երեք անձնիշներով կը սահմանափակվին, դեկաբրի յայտնութիւնը անկասկածելի է, բայց մինչև մայիսի 14 այլ անձինք էլ կարող են հանդես գալ։ Խօսում են նոյնպէս Բանկի կանդիդատութեան մասին, որ ուրի տարի առաջ մահուան դատապարտվեցաւ „գիտուն բանկ դատարանից“, որի անդամները գիտուններ էին, բայց ոչինչ արդարութիւն չէ կար։ Այդ անարդար և անշէնեն դատավճիռը յայտնվեցաւ Մակ-Մահոնի նախագահութեան առաջին տարիներում, երբ Բանկի Լիոնի շրջանների մէջի պատգամաւոր էր։ Հասարակութիւնը չէ մոռացել նոյնպէս և այն, որ կայսերութեան ժամանակ Բանկի պատաքիցաւ Աւգիրիայի հեռաւոր տեղերից մէջը և 1859 թուականի ընդհանուր ներումից յետոյ վերադառնալով Փարիզ, ընդդիմադրական կուսակցութեան առաջնորդ անդամներից մէն էր։ Ամենքին յայտնի են նրա մտերիմ բարեկամական յարաբերութիւնները Գամբետտայի հետ։ Այս բոլոր հանգամանքները նրան մեծ առաւելութիւններ են տալիս, բայց դեռ ևս յայտնի չէ, կը հանդայնի արդեօք նա ընտրվել և ինչ կարծիք կը յայտնի Գամբետտայ, որ բնակվում է Փարիզի ինքնիշխող շրջանի մէջ և այդ շրջանի ընտրողներից մէն է։ „République Française“ լրագիրը այդ ընտրութիւնների մասին ոչինչ չէ գրում, կարծես Գամբետտա դրա վրա ուշադրութիւն չէ դարձնում և նրա բարեկամներն էլ լռում են։

Մի և նոյն ժամանակ յայտնի է, որ Գամբետտա կամենում է գրավել այդ ընտրութիւններով։ Դրանից կարելի է եզրակացնել, որ Գամբետտա Բանկին կը պաշտպանի։

Նոյնպէս Փարիզի մէջ լուր տարածվեցաւ, որ ֆրանսիական զօրքերը Ցունիսի արշաւանքի ժամանակ զրաղվել են ասարառուութեամբ։ Ասում են, որ նրանք թշնամիներից Տարիբերա կիսդանների են յափշտակել թէպէտ մի քանի լրագիրներ յարձակում են այդ զորձի դէմ, միւսները նրան արդարացնում են, ասելով, որ ասարառուութեան ասարկելի է ասնել պատերազմի ժամանակ։

Լրագիրները հաղորդում են, որ Բարանի Սենատորը սասցել է հեռագիրներ վիրենից, Բերլինից և Պետերբուրգից, որանցով այդ քաղաքների կառավարութիւնները շնորհաւորում են Ֆրանսիական կառավարութեանը Ցունիսի արշաւանքի յաջող փարձանը։ Մի և նոյն ժամանակ լինելով երեք կառավարութիւնները շնորհաւորում են Ցունիսի և Ֆրանսիայի մէջ կայացած համաձայնութիւնը Փարիզի մէջ դեկլարատիական զարձուղութիւնների և սասատ խաղալիքի և Անգլիայի կողմից, որոնք, ինչպես երևում է, մոռալիս են առանձին պայմաններ և ապահովութիւն պահանջել Թիւնիսի հանձնելու զրամի համար։ Բայց Ֆրանսիական կառավարութիւնը վճռել է ոչինչ պարտաւորութիւն չառնել իր վրա, ի նկատի առնելով Թիւնիսի նշանակութիւնը, որ խնայելս Ցունիսի մեռաքն է։ „National“ լրագիրը հաղորդում է, որ, երբ Ֆրանսիան գաղնագրութիւնը հասատաց Ցունիսի հետ, իսկապան կառավարութիւնը գիտեց Թիւրինի գաղնագիրը սորագրող պետութիւններին եւրոպական մի կոնգրեսի հրաւիրելու առաջարկութեամբ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Ֆրանսիան խանգեց Թիւրքայ կայսերութեան ամրողջութիւնը։ Իշխան Բիսմարկ պատասխանել է, որ այդ առաջարկութիւնը անկարելի է ընդունել, առաջինը այն պատճառով, որ Ֆրանսիան չէ միացել իր հետ Ցունիսը և երկրորդ՝ Բ. Դրան գերիշխանութիւնը Ցունիսի վրա կասկածելի է։

Ֆրանսիայի և Ցունիսի մէջ կապված գաղնագրութիւնը բաղկացած է մեռաբերպես 10 կէտերից։ Գաղնագրութեան բնագիրը ուղարկված է Փարիզ, որտեղ նա շուտով կը կարդացվի պատգամաւորների ժողովի մէջ։ Դիպլոմատիական դժուարութիւնների քննաքննութիւնից ոչ օր չէ սպասում թէպէտ Ֆրանսիան այդ հարցի վերաբերեալ դիպլոմատիական բանակցութիւններ չէ ունեցել, բայց անպէտքան կառավարութեանը յայտնի են եղել նրա դիտաւորութիւնները։

ԹԻՒՐԻՒԱ

—

„Daily News“ լրագրին „Հայերը և Թիւրքերը“ վերնագրով Կ. Պոլսից մի թղթակցութիւն է գրում „Մուշի Հայոց եպիսկոպոս ս. Գրիգորը և Բարանեկի առաջնորդ ս. Յոհաննէս տաճկի կառավարութեան կողմանէ կարգադրվելով՝ Հայաստանից ուղարկվեցան Օրլիս պատգամաւորներ, թէ նոքա զրգռում են Հայերին կառավարութեան դէմ։ Հայոց ազգային պատկիները ծանրաբեռնված են Այս տարվայ օրագրոյն էլ է արգելվել այն գասագրքերի հետ միասին, որոնք պարունակում են Հայաստանի հին պատմութիւնը կամ աշխարհագրութիւնը։ Այս զեկուցում ասել են լուսաւորեան նախարարին, որ մի ոգէստ փաշայ է, թէ Հայոց պատգամաւորներից մէջ ճշմարտութիւն չը կայ, որովհետև Հայերը երբէք անկախ չեն եղել և հարատեւութիւն ու թագաւորներ և զօրագրներ չեն ունեցել։ Վարչութիւնը արդեքիլ է Հայերին նմանապէս ամէն տեսակ ժողովներ, նոյն իսկ ուսումնական նիստերի վրա գասախօսութիւններն էլ։ Բերեվիան Հայաստանում գտնվող Հաքեարի գաւառի Հայերը և Թիւրքերը միատեղ մի պարոնարիս են ուղարկել Հայոց Պատրիարքին գանգատելով, թէ տաճկի կառավարիչները, չը նայելով սովին և թանգատեանքը մեծապոյն խստութիւնով հաւաքում է Հարկերը, և թէ վերջի ժամանակներս քիչ-քիչը քաղաքում և հինգ գիւղեր են ասերիլ։ Նոյն հարատարիչ վիճակը տիրում է նաև Այաշկիրատում։

Սրը Դիվի պատասխանում է միսմի բաքսիքրին, որ հարցրել էր, թէ արդեօք (Ազգերոյ) կառավարութիւնը պիտի քանայ Հայաստանի համար էլ մի այնպիսի վարչութիւն ձեռք բերել, որպիսին զոհացուցիչ կերպով զործադրվել է Լիբանանի նահանգում,—ասելով թէ աւելի օգտակար են Հայերը Հայաստանի մասին խօսելը յետաձգել մինչև որ կը վերջանայ յունաց սահմանի խնդիրը։ Սրբոյ կը հանի յարմար ժամանակը, Թագուհու վառավարութիւնը պիտի ամեն մի առաջարկութիւն նկատագրեան առնէ, որ կարող էր սուլթանի հպատակ հայերի վիճակը բարելաւել։

Կ. Պոլսից գրում են „Standart“ լրագրին թէ այդ մայրաքաղաքում մի շատ ուժգոյ կերպով վրդովված են գեսպանները մէկի մի գիտաղութեամբը, որ նա այս մեռ օրերս արել էր, թէ սանմիջապէս յունաց խնդիրը լուծվելուց յետոյ խոյսդ պիտի սկսվի Հայաստանի վերանորոգման խնդիրը և վերջանալու։

„Daily News“ լրագրի թղթակիցը Պոլսից գրում է։ տաճկի կառավարութիւնը կասկած ունի թէ Աշաշկիրատ, Բայազետի և Բայբուրտի հայերը գիտաւորութիւն ունեն ապատամբվելու։ Փալաս քաղաքում ամէն գիշեր թիւրքերը զուարճանում են հայերի և նոցա եպիսկոպոսի տների վրա հրացան արձակելով։ Մարաթիայում հայոց վանքը կողոպտում է զարձել։ Ռուսները քաղաքներում զաղթականներ են մտցնում Ղարսի նահանգը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի։ Երկի հասաւ այստեղ նոր նուաճված Ցեկի ցեղի պատգամաւորութիւնը, որ կազմված է հինգ անձինքներից, տեղիցիների գլխաւորված ղեների Տրամանաւ Ցիվա Սարգաթի հետ, որ բերել է իր հետ իր տաս տարեկան որդի Ուրայի-Բերդիին նրան Ս. Պետերբուրգի գինուորական ուսումնարանները մէկի մէջ թողնելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է։ իշխան Ալեքսանդրաքսան հրամայված է իրաւաբանական ուսումնարանի հոգաբարձու լինել։ Նոյն լրագրի մէջ տպված է։ Պետական բանկի կառավարչի օգնական Դիկոպպեվ նշանակված է փինանսների մինիստրի օգնական։ Լաւ է տարաձված, որ շուտով հրաման կը տրվի գինուորական հագուստի ձեւը փոխելու մասին։

ԱԹԵՆԵՐ, 16 մայիսի։ Ցունաստանը ընդունեց յոյնութիւնքների գաղնագրութիւնը։ Հաւատարմատարներ են նշանակված սահմանագիծը որոշելու համար։

ԼՈՆԴՈՆ, 16 մայիսի։ Միսպեստաուտի մէջ, Իրլանդիայում, նշանաւոր կռիւ պատահեցաւ ժողովրդի և զօրքերի մէջ։

ՀՈՒՍ, 16 մայիսի։ Նոր մինիստրութիւն կազմվեցաւ Գեպրեսիսի նախագահութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Պետական բանկի 5% առմանը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 35 կ., չորրորդ 94 ր. 85 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 5 կ., երկրորդ 217 ր. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 12 կ., երրորդ 93 ր. 12 կ., ոսկի 8 ր. 9 կ։ Ռուսաց 1 բուլ Լոնդոնի վրա արժէ 24,28 պենս, Ամստերդամի վրա 123 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 256 Ֆրանկ 25 սանտիմ։ Բոլոր արտադրութիւնը սակաւ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ